ՏԱԹԵՎ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեմա՝ ՀՀ ժողովրդագրական իրավիճակը և ժամանակակից միգրացիոն գործընթացները

Հետազոտող ուսուցիչներ՝ Նաիրա Ասատրյան, Կարինե Մկրտչյան,
Երևանի Պետո Յավորովի անվան համար 131 հիմնական դպրոց
Անահիտ Հմայակյան,
Երևանի Խ. Աբովյանի անվան համար 2 հիմնական դպրոց

ԵՐԵՎԱՆ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3

ԳԼՈՒԽ 1. ՀՀ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ 1990-2022ԹԹ. 4

ԳԼՈՒԽ 2. ՀՀ ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ 12

ԳԼՈՒԽ 3. ՀՀ ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 15

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 17

«ՀՀ ժողովրդագրական իրավիճակը և ժամանակակից միգրացիոն գործընթացները» թեմայի ուսուցման դասի պլանի օրինակ 18

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 21

Հավելված 1. 22

Հավելված 2. 24

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հետազոտական աշխատանքի թեման է՝ «ՀՀ ժողովրդագրական իրավիճակը և ժամանակակից միգրացիոն գործընթացները»։

Թեման արդիական է այնքանով, որ վերջին տարիներին ՀՀ կատարվող քաղաքական իրադարձությունները, համաշխարհային ընդգրկում ստացած կորոնավիրուսը, Արցախյան 44-օրյա պատերազմը, երկրում տիրող սոցիալ-տնտեսական ճգնաժամը, հանգեցրին ՀՀ ժողովրդագրական իրավիճակի վատթարացմանը, 1990-ականներից ի վեր արդեն քրոնիկ դարձած ցածր բնական աճի էլ ավելի նվազմանը և արտագաղթի ծավալներիի աճին։ Եվ քանի որ, բնակչության բնական աճն այն կարևոր բաղադրիչներից է, որն ապահովում է հասարակության բնականոն զարգացումը և հնարավորություն է տալիս դրա հիման վրա կատարել ռազմավարական կանխատեսումներ, ուստի ժողովրդագրական իրավիճակի վերլուծությունը ուղղակի անհրաժեշտ է՝ հասկանալու համար, թե ինչպիսի ժողովրդագրական քաղաքականություն պետք մշակվի ՀՀ սոցիալ-տնտեսական զարգացումն ապահովելու համար։

Հետազոտական աշխատանքի համար տեղեկատվության հիմնական աղբյուր են հանդիսացել ինչպես գիտական գրականությունը, այնպես էլ ՀՀ վիճակագրական տարեգրքերը, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հրապարակումները։

Աշխատանքում առանձին բաժիններով ներկայացրել ենք ՀՀ բնական շարժի, մեխանիկական շարժի ցուցանիշների վերլուծությունը, ՀՀ կողմից իրականացվող ժողովրդագրական քաղաքականությունը, դրա արդյունավետությունը։

Եզրակացություններ բաժնում կատարել ենք եզրահանգումներ և առաջարկություններ՝ ուղղված ժողովրդագրական իրադրության բարելավմանը։ Աշխատանքի վերջում կոնկրետ դասի օրինակով փորձել ենք ցույց տալ, թե ի՞նչ մեթոդով կարելի է այս թեման ուսումնասիրել դպրոցում և ո՞ր դասարանում։

ԳԼՈՒԽ 1. ՀՀ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ 1990-2022ԹԹ.

Ինչպես գիտենք բնակչության վերարտադրությունը բնական ճանապարհով սերնդափոխության գործընթացն է, որը բնութագրվում է ծնելիության, մահացիության և բնական աճի ցուցանիշների օգնությամբ:

Ինչպես ցույց են տալիս խորհրդային տարիներին անցկացված մարդահամարների

Տարի	Ընդամենը, մարդ				Գործակիցը,1 000 բնակչի հաշվով, ‰			Մանկական մահացության գործակիցը, 1 000 կենդանի ծնվածի հաշվով
	Ծնվածներ	Մահացածներ	այդ թվում՝ մինչև 1 տարեկան հասակում	բնական վելաճ	Ծնելիության	Մահացության	Բնական հավելաճի	
1989	75 250	20 853	1 534	54 397	21.6	6.0	15.6	20.4
1990	79 882	21 993	1 465	57 889	22.5	6.2	16.3	18.5
1991	77 825	23 425	1 404	54 400	21.6	6.5	15.1	17.9
1992	70	25	1 336	44 757	19.9	7.3	12.6	18.5

	581	824						
1993	59 041	27 500	1 048	31 541	17.3	8.1	9.2	17.1
1994	51 143	24 652	772	26 491	15.5	7.5	8.0	14.7
1995	48 960	24 842	697	24 118	15.0	7.6	7.4	14.2
1996	48 134	24 936	747	23 198	14.8	7.7	7.1	15.5
1997	43 929	23 985	678	19 944	13.5	7.4	6.1	15.4
1998	39 366	23 210	580	16 156	12.2	7.2	5.0	14.7
1999	36 502	24 087	572	12 415	11.3	7.5	3.8	15.4
2000	34 276	24 025	540	10 251	10.6	7.5	3.1	15.6
2001	32 065	24 003	497	8 062	10.0	7.5	2.5	15.4
2002	32 229	25 554	450	6 675	10.1	8.0	2.1	14.0
2003	35 793	26 014	422	9 779	11.3	8.2	3.1	12.0
2004	37 520	25 679	430	11 841	11.8	8.1	3.7	11.6
2005	37 499	26 379	460	11 120	11.9	8.4	3.5	12.3

2006	37 639	27 202	523	10 437	12.0	8.7	3.3	13.9
2007	40 105	26 830	433	13 275	12.9	8.6	4.3	10.9
2008	41 185	27 412	442	13 773	13.3	8.9	4.4	10.8
2009	44 413	27 560	454	16 853	14.5	9.0	5.5	10.4
2010	44 825	27 921	512	16 904	14.7	9.2	5.5	11.4

Աղյուսակ1.[1]

արդյունքները, Հայաստանի Հանրապետության բնակչությունը մինչև 1992թ.կայուն բնական աճ էր արձանագրել, երբ տարեկան միջին աճը կազմել էր 1,5 %: Դա ամենաբարձր ցուցանիշներից մեկն էր Խորհրդային միության հանրապետությունների մեջ և զիջում էր միայն Ադրբեջանին ու Միջինասիական հանրապետություններին (տե՛ս աղյուսակ 1.):

Սակայն Հայաստանի անկախացումը, դրան նախորդած Սպիտակի աղետալի երկրաշարժը, քաղաքական սրվող պայմանները՝ կապված Ղարաբաղյան շարժման հետ և դրան հաջորդած Ղարաբաղի ազատագրման համար մղված պատերազմը, օրեցօր վատացող սոցիալ-տնտեսական պայմանները, գործազրկությունը, զանգվածային արտագաղթը իրենց խորը կնիքը թողեցին ժողովրդագրական իրավիճակի վրա:

Այսպես, եթե 1990թ. ծնված երեխաների թիվը հանրապետությունում կազմում էր 79.882, մահացածներինը՝ 21.993 մարդ, իսկ բնական աճը՝ 57889 մարդ, ապա 2001թ. բնական աճի կայուն նվազման պայմաններում ծնունդները հասան նվազագույն ցուցանիշի՝ 32.065-ի, իսկ մահերը՝ 24.003-ի: Բնական աճը կազմեց 8062 մարդ: Արդյունքում, 20-րդ

[1] Հայաստանի ժողովրդագրական ժողովածու, 2021, Մաս 1:Ափոփում, էջ 23

դարի վերջին տասնամյակում նախորդի հետ համեմատած՝ բնական աճը կրճատվեց գրեթե 5,3 անգամ:

Սպասվում էր, որ 2001թ.-ից Հայաստանում իր ամենացածր կետին հասած ծննդաբերության ցուցանիշը պետք է աճ արձանագրեր, քանի որ ամուսնական ակտիվ շրջան էր մտնում 70-ականներին և 80-ականներին ծնված սերունդը, որի թիվը զգալիորեն գերազանցում էր նախորդ դարի 50-60-ականների ծնվածներին: Եվ այս պարագայում պետք է արձանագրվեր ծնունդների զգալի աճ: Ըստ կանխատեսումների՝ ծննդաբերությունը պետք է առնվազն հասներ տարեկան 50-60 հազարի: Սակայն կանխատեսումները այս պարագայում ևս չիրագործվեցին. Ճիշտ է, ծնելիությունը, բնական աճը նախորդ տարիների համեմատ սկսեց ավելանալ, բայց ընդհանուր առմամբ, այն շարունակում է ցածր մնալ: 2009 և 2010թթ. ծնելիությունը հասավ 21-րդ դարի առաջին տասնամյակի բարձրակետին՝ 44.600 և 44.800: Մյուս կողմից ավելացան մահերը՝ համապատասխանաբար՝27.600 և 27.800 մարդ: Բնական աճը կազմեց 16.800 և 16.900 մարդ:

Այսպիսով, չնայած, 2002-2011թթ. գրանցված ծնունդների աճին՝ նախորդ՝1992-2001թթ. հետ համեմատած՝ Հայաստանի Հանրապետությունում ծնունդների թիվը կրճատվել է 1,2 անգամ, իսկ բնական աճը՝ 1,8 անգամ:

Իսկ այժմ ներկայացնենք ՀՀ ժողովրդագրական իրավիճակը վերջին տասնամյակում[2]:

Աղյուսակ 2.

Տարի	Ընդամենը, մարդ				Գործակիցը,1 000 բնակչի հաշվով, ‰		
	Ծնված-ներ	Մահա-ցածներ	այդ թվում՝ մինչև 1	Բնական հավելաճ	Ծնելիու-թյան	Մահա-ցության	Բնական հավելաճի

[2] Հայաստանի ժողովրդագրական ժողովածու, 2021, Մաս 1:Ափոփում, էջ 23 :

			տարեկան հասակում				
2011	43 340	27 963	507	15 377	14.3	9.2	5.1
2012	42 480	27 599	458	14 881	14.0	9.1	4.9
2013	41 790	27 196	407	14 594	13.8	9.0	4.8
2014	43 031	27 714	376	15 317	14.3	9.2	5.1
2015	41 763	27 878	370	13 885	13.9	9.3	4.6
2016	40 592	28 226	352	12 366	13.5	9.4	4.1
2017	37 700	27 157	311	10 543	12.6	9.1	3.5
2018	36 574	25 751	261	10 823	12.3	8.7	3.6
2019	36 041	26 186	219	9 855	12.2	8.8	3.4
2020	36 353	36 170[3]	267	183	12.3	12.2	0.1

Աղյուսակի տվյալներից երևում է,որ բնական աճի ցուցանիշների մի փոքր աճը սկսած 2012թ.նորից սկսում է նահանջել, ինչի արդյունքում, տաս տարվա ընթացքում բնական աճը նվազելով արդեն 2020թ. կազմում է 0,1‰: Մահացիության բարձր ցուցանիշը արդյունք է կորոնավիրուսով պայմանավորված մահերի (3 545 մարդ[4]), բայց հատկապես 2020թ. 44-օրյա պատերազմի ընթացքում մեծաթիվ զոհվածների: ԵՎ եթե հաշվի առնենք, որ զոհվածները դրանք այն սերունդն էին, որ նոր ընտանիք պիտի կազմեին, ապա, դժվար չէ կանխատեսել, որ առաջիկա տարիների ընթացքում բնական աճը նորից անկում է ապրելու:

ՀՀ ժողովրդագրական իրավիճակը օբյեկտիվ վերլուծելու համար կարևոր է նաև բնական շարժի ցուցանիշների ուսումնասիրությունը ըստ մարզերի, գյուղ–քաղաք հարաբերակցությամբ:

[3] Ներառյալ 2020թ. 44-օրյա պատերազմի ընթացքում զինվորական գործողությունների հետևանքով (Y36) արձանագրված դեպքերը, որոնց քաղաքացիական կացության գրանցումները կատարվել են 2021թ. հունվար-մարտ ամիսների:
[4]Հայաստանի ժողովրդագրական ժողովածու, 2021, Մաս 1:Մահացիություն, էջ 97

Գծանկար 1 [5] .



Ինչպես երևում է գծանկար 1-ից, բնական շարժի ցուցանիշները անկում են ապրել բոլոր մարզերում, բացի Գեղարքունիքից, ընդ որում գրանցված բացասական բնական աճը խոսում է դրանցում նեղացված վերարտադրության և բնակչության ծերացման մասին: Վիճակն ավելի սուր է արտահայտված Վայոց ձորում, Սյունիքում և Տավուշում: ԵՎ դրա պատճառը ոչ միայն սոցիալ-տնտեսական ծանր պայմաններն են, աղքատության և գործազրկության բարձր մակարդակը, այլև պատերազմական իրադրությունը, որի անմիջական գոտում են գտնվում նշված մարզերը: Սահմանամերձ գյուղերը աստիճանաբար դատարկվում են, երիտասարդները կամ արտագաղթում են կամ տեղափոխվում են Երևան: Այդ իսկ պատճառով մայրաքաղաք Երևանի բնակչությունը ավելանում է ոչ միայն բնական շարժի, այլ նաև մեխանիկականի հաշվին:

[5] Հայաստանի ժողովրդագրական ժողովածու, 2021, Մաս 1:Ափոփում, էջ 26-29:

Աղյուսակ 3.[6]

Ցուցանիշներ	Ընդամենը Total	Քաղաքային Urban	Գյուղական Rural
Բնական հավելաճի գործակիցը, ‰	0.1	0.3	-0.4
Ծնունդների սեռերի հարաբերակցության գործակիցը (տղաների թվաքանակը 100 աղջկա հաշվով)	110	108	115
Բնակչության քաղաք/գյուղ հարաբերակցությունը , %	100	64.0	36.0
Ծնելիության ընդհանուր գործակիցը, ‰	12.3	13.4	10.3
Մահացության ընդհանուր գործակիցը ‰	12.2	13.1	10.7

Եթե մինչև 2016թ. բնական աճի ցուցանիշները քաղաքներում և գյուղերում գրեթե հավասար էին, գյուղերում անգամ ավելի բարձր էր քան քաղաքներում, ապա ներկայումս, ինչպես երևում է աղյուսակ 3-ից, գյուղերում ծնելիությունը ավելի է նվազել, իսկ մահացիությունը աճել: Արդյունքում բնական աճը բացասական է դարձել:Դա բացատրվում է գյուղերից արտագաղթի մեծ ցուցանիշներով: Այսօր սահմանամերձ, բարձրլեռնային գյուղերում, գերակշռում են կանայք և ծերերը, աշխատանքային տարիքի բնակչությունը աշխատանքի, ուսման նպատակով ժամանակավոր կամ մշտական տեղափոխվում են կամ հանրապետության խոշոր քաղաքներ, կամ էլ արտերկիր:

6 Հայաստանի ժողովրդագրական ժողովածու, 2021, Մաս 1:Ափոփում, էջ 24-26:

Փոխվել է նաև մայրանալու տարիքը և ընտանիքում երեխաների թիվը: Եթե մի քանի տասնամյակ առաջ ՀՀ յուրաքանչյուր ընտանիքին բաժին էր ընկնում 3-4 երեխա, ապա ներկայումս սովորական են դառնում 1-2 ունեցող ընտանիքները: Իսկ ինչ վերաբերում է մայրանալու միջին տարիքին՝ այն այժմ կազմում է 28 տարեկան, այն դեպքում, երբ 2016թ. եղել 26:[7] Բնական աճի բացասական ցուցանիշները լուրջ փոփոխություններ են մտցնում բնակչության սեռատարիքային կազմում:

Ժողովրդագրական իրավիճակի առկա հիմնախնդիրներից է բնակչության ժողովրդագրական ծերացումը, որի ընթացքը հանրապետությունում հետխորհրդային տարիներին մեծապես արագացել է: Ըստ ՄԱԿ-ի կողմից սահմանված ժողովրդագրական ծերացման սանդղակի, եթե երկրի բնակչության կառուցվածքում 65 և բարձր տարիքի բնակչության մասնաբաժինը կազմում է 7%-ից ավելի, ապա տվյալ բնակչությունը համարվում է ծերացող: Այդ ցուցանիշը 2021թ. տարեսկզբի դրությամբ 12.6 է կազմել: Ըստ կանխատեսումների՝ առաջիկա 10-15 տարիների ընթացքում մեծահասակների թիվը համեմատաբար կավելանա, և նրանք կկազմեն բնակչության 20%-ից ավելին: Այս ամենը կհանգեցնի նրան, որ Հայաստանը կունենա “ծերացող հասարակություն”, որը հղի է տնտեսական և սոցիալական անկանխատեսելի հետևանքներով: Այս երևույթն ավելի սուր արտացոլում կարող է ստանալ հատկապես գյուղական բնակավայրերում, մասնավորապես սահմանային գոտիներում, որտեղից արտագաղթի և արտագնա աշխատանքի մեկնողների թիվն առավելապես մեծ է, և այսօր արդեն փոքր թիվ չեն կազմում “ամայացող” և “ծերացող” գյուղերը:

[7] Հայաստանի վիճակագրական տարեգիրք-2021, էջ 37:

ԳԼՈՒԽ 2. ՀՀ ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ

Միգրացիան Հայաստանում իր թափը չի կորցնում արդեն 25 տարի: Որպես հիմնական պատճառներ, մեկնողները նշում են Հայաստանում զարգացման հեռանկարների բացակայությունը, բիզնեսով զբաղվելու խոչընդոտները, անցանկալի բարոյահոգեբանական մթնոլորտը եւ անկայուն աշխարհաքաղաքական վիճակը:

1988-2007թթ. Հայաստանի բնակչության միգրացիայի ծավալները փորձագետները ներկայացնում են 4 փուլով՝ ապակայունացման (1988-1991), զանգվածային արտահոսքի (1992-1994), անցում կայունացման (1995-2001), շարունակական ժամանակավոր միգրացիայի (2002-2008) փուլեր: Այս բաժանումը պայմանավորված է Հայաստանում տեղի ունեցող իրադարձություններով:

Առաջին փուլը Ադրբեջանից եկած հայ փախստականների, երկրաշարժի, հասարակական-քաղաքական իրադարձությունների շրջանն էր: Երկրորդում արտագաղթի հիմնական պատճառներն էին տնտեսության քայքայումը, համատարած գործազրկությունը, կենցաղային խնդիրները: Այս ընթացքում 5 բնակչից 1-ը մեկնում էր երկրից անվերադարձ: Կայունության անցումը կատարվեց սոցիալ-տնտեսական վիճակի կայունացման, արտակարգ գործոնների ազդեցության թուլացման հետևանքով:

Չորրորդ փուլում փորձագետները խոսում են արդեն արտաքին աշխատանքային միգրացիայի մասին, որը մինչ այսօր շարունակական միգրացիայի փուլում է: Միայն թե այժմ դրան միացել է նաև անբարենպաստ աշխարհաքաղաքական պատերազմական իրադրությունը:

2021-ին Հայաստանից ավելի շատ քաղաքացի է մեկնել, քան ժամանել, փաստում է Վիճակագրական կոմիտեն: Հրապարակված վիճակագրության համաձայն, Հայաստանի անձնագրով մեկնողների ու ժամանողների տարբերությունը անցած տարի գերազանցել է 73 հազարը: Սա ամենաբացասական ցուցանիշն է՝ անցած տասը տարվա ընթացքում: Սակայն փորձագետները պնդում են, որ մեկնողների ու ժամանողների բացասական հաշվեկշիռն արտագաղթի ցուցիչ համարելը սխալ է, քանի որ սահմանահատումների վիճակագրության մեջ ներառված են արտագնա աշխատանքի, գործուղման մեկնողները, ուսանողները, հարազատներին այցելության մեկնողները, որոնք երկիրը լքում են

ժամանակավոր, բայց որոշ դեպքերում՝ մեկ տարուց ավելի ժամկետով։ 2020թ. միգրացիոն մնացորդը դրական էր՝ կորոնավիրուսի սահմանափակումներով պայմանավորված։ ՀՀ աշխատանքային միգրանտները, ովքեր պետք է մեկնեին արտերկիր, շուրջ 60-70 հազար՝ տարվա կտրվածքով, սահմանափակումների արդյունքում մնացել էր երկրում։

ՀՀ ժամանողների ու մեկնողների թիվը և միգրացիոն մնացորդը 2012-2022թթ.

Աղյուսակ 4.

	2012	2014	2016	2017	2018	2019	2020
ՀՀ - ընդամենը							
Ժամանել են	29 300	17 400	15 900	13 300	15 300	15 800	36 600
Մեկնել են	38 700	39 200	40 800	37 300	33 586	31 200	33 200
Որից՝ միջպետական տեղաշարժեր							
Ժամանել են	19 500	10 700	8 100	9 200	10 100	12 100	10 800
Մեկնել են	28 900	32 500	33 000	33 200	28 386	27 500	7 400
Միգրացիայի մնացորդը	-9 400	-21 800	-24 800	-24 000	-18 286	-15400	3 400

Ակնհայտ է, որ 2021 թ. Մենք պետք է ունենայինք այդ հոսքի մեկնում՝ աշխատանքային գործունեությունը իրականացնելու նպատակով։ Արդյունքում ունեցանք միգրացիոն բացասական մնացորդ։[8] Պաշտոնական տվյալներով, 2021-ի միգրացիոն մնացորդը 4200 է եղել, այսինքն՝ այդքան քաղաքացի չի վերադարձել։ Այսօր պատերազմական դրությամբ պայմանավորված երկրում ներքին միգրացիա է տեղի

[8] Աղբյուրը՝ Ազատություն ռադիոկայանի և միգրացիոն ծառայության պետ Արմեն Ղազարյանի հարցազրույցը, 2022 թ.։

ունենում սահմանամերձ գյուղերից դեպի ցածրադիր գյուղեր, քաղաքներ բնակչության կամավոր և հարկադիր տեղաշարժմամբ, որը ռազմավարական առումով ուղղակի անթույլատրելի է: Փոխվել են նաև միգրացիայի դրդապատճառները: Եթե 1990-ականներց ի վեր ՀՀ բնակչության միգրացիայի գլխավոր դրդապատճառը սոցիալ-տնտեսականն է եղել, ապա այսօր դրան միացել է նաև աշխարհաքաղաքականը: Հայաստան-Ադրբեջան պատերազմական լարված իրադրությամբ պայմանավորված շատ հայ ընտանիքներ փորձելով իրենց տղա երեխաներին ազատել զինվորական ծառայությունից, գերադասում են դառնալ այլ երկրի քաղաքացի՝ հրաժարվելով Հայաստանի քաղաքացիությունից: Հայաստանից մեկնած միգրանտների գերակշռող մասը՝ մոտ 56%ը, հանգրվանել է Ռուսաստանի Դաշնությունում: Եվրոպական երկրներին բաժին է ընկնում միգրանտների մոտ 15%-ը, ԱՄՆ-ին եւ Կանադային՝ 9.5%-ը, իսկ 19.5%-ը բաժին է ընկել այլ երկրներին:

Իսկ ինչ վերաբերում է ներգաղթին, ապա 2021-2022թթ. Հայաստան ներգաղթողների մեջ բացի սփյուռքահայությունից, մեծ թիվ են կազմում տարհանված Արցախի հայությունը, ռուսները, ուկրաինացիները՝ Ռուսաստան-Ուկրաինա պատերազմով պայմանավորված, իրանցիները, հնդիկները և այլն:

ԳԼՈՒԽ 3. ՀՀ ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ժողովրդագրական քաղաքականությունը պետական մարմինների և այլ սոցիալական ինստիտուտների կողմից բնակչության վերարտադրության կարգավորման ոլորտում նպատակաուղղված գործունեություն է, տնտեսական, վարչա-իրավական, դաստիարակչական, քարոզչական և այլ ձեռնարկումների համակարգ, որոնց օգնությամբ պետությունն իր համար ցանկալի ուղղությամբ ներգործում է բնակչության բնական շարժի (ամենից առաջ ծնելիության) վրա։

Աշխատանքում կատարված վերլուծությունից պարզ է դառնում, որ ՀՀ դասվում է վերարտադրության առաջին տիպի երկրների շարքին, որոնց բնորոշ էր պարզ վերարտադրությունը, հետևաբար մեր ժողովրդագրական քաղաքականությունը պետք է ուղղված լինի ծնելիության խրախուսմանը։ Որպես օրինակ, կարող ենք բերել ՌԴ-ն, որը տարիներ շարունակ ունենալով բացասական բնական աճ, արդյունավետ, ճիշտ մշակված քաղաքականության արդյունքում, այսօր արդեն դրական աճ է գրանցում (նեղացված վերարտադրությունից անցել է պարզի)։

Այսպես, 2001թ. առաջադրանքներ դրվեցին Ռուսաստանի ժողովրդագրական իրավիճակի բարելավման ուղղությամբ, նշվեցին դրանց իրագործման մեխանիզմները։ Այս առումով Ռուսաստանն իրոք անհանգստանալու հիմքեր ուներ։ Տարեկան կտրվածքով բնական աճը բացասական էր 600 հազար մարդով, և նման շարունակության պարագայում, ըստ ՄԱԿ-ի ժողովրդագրական քաղաքականության մասնագետների, 2025թ. նրա բնակչության թիվը կկազմեր 130 մլն, իսկ 2050թ.՝ 110 մլն մարդ, որը Ռուսաստանի նման երկրի համար պարզապես կործանում է։ Ուստի, ինչպես վկայում են վիճակագրական փաստերը, ազգային ծրագրի շրջանակներում ընդգրկված ժողովրդագրական իրավիճակի բարելավմանն ուղղված քայլերից ելնելով՝ յուրաքանչյուր երկրորդ երեխայի պարագայում 400 հազար ռուբլու հատկացումը տվել է իր առաջին դրական արդյունքները։ Արդեն իսկ 5 մլն ռուս ընտանիք օգտվել է մայրական կապիտալի տրամադրած միջոցներից։ 2012թ. սկսած Ռուսաստանում ծնունդները սկսել են գերազանցել մահերին, և բնական աճի ցուցանիշը դրական է։ Բացի այս, առաջին իսկ

երեխայի ծնվելու պարագայում ՌԴ կառավարությունը յուրաքանչյուր երեխայի համար ամսական մոտ 170 դոլարին համարժեք գումար է հատկացնում:

Սոցիալական աջակցության, նպաստների չափերը, բնականաբար ավելի բարձր են եվրոպական երկրներում: Գերմանիայում յուրաքանչյուր ծնված երեխայի համար պետությունն ընտանիքին երեք տարի անընդմեջ ամսական վճարում է 700 եվրո:

Ժողովրդագրական իրավիճակը բարելավելու և ծնելիությունը խթանելու նպատակով՝ մեր երկրում ևս պետության կողմից նորածին երեխայի ընտանիքին տրամադրվում է ֆինանսական աջակցություն՝ մայրության, երեխայի ծննդյան միանվագ, մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստի և այլնի միջոցով:

Առաջին և երկրորդ երեխայի ծննդյան միանվագ նպաստի չափը 300,000 դրամ է, երրորդ և չորրորդ երեխայի ծննդյան դեպքում՝ 1,000,000 դրամ, իսկ հինգերորդ և հաջորդ երեխաների ծննդով պայմանավորված՝ 1,500,000 դրամ:

2022 թ. հունվարի 1-ից հետո ծնված կարգաթվով երրորդ և հաջորդ երեխաների դեպքում տրամադրվում է ամսական 50,000 դրամ աջակցություն՝ մինչև երեխայի 6 տարեկան դառնալը: Այսինքն, ընտանիքն ստանում է ամսական 50,000 դրամ, եթե ունի առնվազն 2 երեխա, իսկ երրորդ և հաջորդ երեխաները ծնվել են 2022 թ. հունվարի 1-ից հետո:

Ժողովրդագրական իրավիճակի բարելավման քաղաքականության մեջ է ընդգրկված նաև երիտասարդ նորակազմ ընտանիքներին մատչելի բնակարաններով ապահովելու միջնաժամկետ ծրագիրը: Սակայն ընդունված հայեցակարգերը բավարար արդյունք չեն ապահովում, իսկ կյանքը ցույց է տալիս, որ հստակ ժողովրդագրական քաղաքականության բացակայությունը կարող է խիստ բացասական հետևանքներ ունենալ Հայաստանի նման փոքր երկրի համար, որը գտնվում է անկայուն աշխարհաքաղաքական գոտում, ունի ներքին և արտաքին բազմաթիվ լուրջ մարտահրավերներ: Իսկ սրա արդյունքում Հայաստանում արձանագրվում է այն իրողությունը, որ մեր երկիրը կարող է դասվել վերարտադրողական տեսանկյունից անկարողունակ երկրների շարքում, որը կարող է սպառնալ ազգային անվտանգությանը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հետազոտելով և վերլուծելով «ՀՀ բնակչության վերարտադրության և ժամանակակից միգրացիոն գործնթացները» թեման՝ գալիս ենք այն եզրահանգման, որ բնակչության վերարտադրության ցուցանիշները հետխորհրդային ժամանակներից սկսած մինչ օրս անընդհատ նվազման միտում ունեն, որի արդյունքում բնական աճը նվազել է 6 տոկոսով: Ծնելիության հետագա նվազումը կարող է հանգեցնել նրան, որ 2025թ. Հայաստանում մահերը կարող են գերազանցել ծնունդներին, և բնական աճը կունենա բացասական ցուցանիշներ: Այս հանգամանքն էլ ավելի կարող է խորացնել ժողովրդագրական ոչ բարենպաստ վիճակը և հանգեցնել բնակչության թվաքանակի առավել կրճատմանը: Բնական աժի նման ցածր տեմպերը և միգրացիայի շարունակական բացասական մնացորդը կարող է հանգեցնել ոչ միայն ազգի ծերացման, այլ ազգի պահպանման լուրջ հիմնախնդրի:

Շրջապատված լինելով ոչ այնքան բարեկամ երկրներով, որոնց բնակչությունը, ի դեպ, բավականին մեծ տեմպերով աճում է, Հայաստանը կարող է հայտնվել տնտեսական, քաղաքական, ռազմական ոչ շահեկան իրավիճակում: Այսպես, ըստ ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի կանխատեսումների՝ 2025թ. Թուրքիան կունենա մոտ 90, Իրանը՝ 92, Ադրբեջանը՝ 9,7 , իսկ Հայաստանի բնակչությունը լավագույն դեպքում 3 մլն մարդ:

Սակայն ընդունված հայեցակարգերը բավարար արդյունք չեն ապահովում, իսկ կյանքը ցույց է տալիս, որ հստակ ժողովրդագրական քաղաքականության բացակայությունը կարող է խիստ բացասական հետևանքներ ունենալ Հայաստանի նման փոքր երկրի համար, որը գտնվում է անկայուն աշխարհաքաղաքական գոտում, ունի ներքին և արտաքին բազմաթիվ լուրջ մարտահրավերներ: Իսկ սրա արդյունքում Հայաստանում արձանագրվում է այն իրողությունը, որ մեր երկիրը կարող է դասվել վերարտադրողական տեսանկյունից անկարողունակ երկրների շարքում, որը կարող է սպառնալ ազգային անվտանգությանը:

«ՀՀ բնակչության վերարտադրության և ժամանակակից միգրացիոն գործնթացները» թեմայի ուսուցումը դպրոցում

Դասարան՝ 9-րդ

Թեմա՝ ՀՀ բնակչության բնական և մեխանիկական շարժերը

Նպատակը՝

- *Ծանոթացնել* ՀՀ բնակչության բնական և մեխանիկակական շարժի ցուցանիշներին։
- *Ներկայացնել* այդ ցուցանիշների վրա ազդող գլխավոր գործոնները։
- *Դասակարգել* այդ գործոնների ազդեցությունը՝ հաշվի առնելով ժամանակակից աշխարհաքաղաքական փոփոխությունները։
- *Ցուցադրել* քարտեզին ամենաբարձր և ամենացածր բնական աճի և միգրացիոն մնացորդի ցուցանիշներ ունեցող շրջանները, մարզերը։
- *Կազմել* բնակչության վերարտադրության ցուցանիշների ժամանակակից բնութագիրը՝ ցույց տալով մարզեր-Երևան, քաղաք-գյուղ տարբերությունները։
- *Համեմատել* բնական և մեխանիկական շարժը 1990-2021թթ. կտրվածքով։
- *Կառուցել* գծապատկերներ՝ ամփոփելով թվային տվյալները։
- *Արժևորել* ՀՀ ժողովրդագրական քաղաքականության արդյունավետությունը բնակչության աճի բարձրացման գործում։

Խաչվող հասկացությունները.

Կառուցվածք և գործառույթ՝ ՀՀ բնակչության վերարտադրության կարևոր ցուցանիշներն են բնական և մեխանիկական շարժերը, որոնցով էլ պայմանավորված ընտրվում է ժողովրդագրական քաղաքականությունը։

Պատճառ և հետևանք՝ 1990-2021թթ ՀՀ ծանր սոցիալ-տնտեսական պայմանների և լարված աշխարհաքաղաքական իրադրության պատճառով՝ բնական աճը դրսևորվել է կայուն նվազման տեմպերով, իսկ միգրացիոն մնացորդը եղել է բացասական։

Օրինաչափություն՝ տարիներ շարունակ բնական ցածր աճը և մեծաթիվ արտագաղթը հանգեցրել են բնակչության թվի կրճատմանը և սեռատարիքային կազմի փոփոխությանը:

Կայունություն և փոփոխություն՝ պետության կողմից ընտրված արդյունավետ ժողովրդագրական քաղաքականությունը կարող է նպաստել բնակչության թվի ավելացմանը, ծերացման դանդաղեցմանը և ազգապահպանությանը:

Ուսուցման մեթոդները՝ մտագրոհ, մասնակի որոնողական, համեմատական,գաղափարների քարտեզագրում, քննարկում-բանավեճ:

Ուսուցման մոդելը՝ շրջված դասարան:

Դասի կահավորանքը՝ ՀՀ վարչական քարտեզ, ազգային ատլաս, տեսադաս, դասագիրք, պրոեկտոր, համակարգիչ:

Դասի բովանդակությունը

Ուսուցչի կողմից թեման նախապես հանձնարարված է եղել աշակերտներին՝ խմբային հետազոտական-վերլուծական աշխատանք կատարելու նպատակով: Տրամադրվել է թեմայի հետ առնչվող նյութեր, տեսադաս, պաշտոնական տեղեկատվական աղբյուրների ցանկ:

Կազմակերպչական մաս՝ հաշվառում, դասամատյանի գրանցում, թեմայի վերաբերյալ նյութերի պատրաստում, խմբերի նախապատրաստում:

Խթանման փուլ՝ Ի՞նչ է բնակչության վերարտադրությունը, ինչպիս՞ի ցուցանիշներով է այն բնութագրում, ի՞նչ գործոններ կարող են ազդել դրանց վրա:

Իմաստի ընկալման փուլ՝ խմբերով ներկայացնում են նախապես իրենց հանձնարարված աշխատանքը.

Առաջին խումբ՝ ՀՀ բնակչության բնական շարժի վերլուծությունը

Երկրորդ խումբ՝ ՀՀ մեխանիկական շարժի վերլուծությունը

Երրորդ խումբ՝ ՀՀ սեռատարիքային բուրգը

Չորրորդ խումբ՝ ՀՀ ժողովրդագրական քաղաքականությունը

Կշռադատման փուլ՝ բանավեճ–քննարկում «ՀՀ ժողովրդագրական իրավիճակը սահմանամերձ շրջաններում»:

Անդրադարձ- Ինչպիսի՞ն է ՀՀ ներկայիս ժողովրդագրական իրադրությունը. Ո՞ր գործոններն են այսօր առավել ազդում բնական և մեխանիկական շարժի ցուցանիշների վրա. Ելնելով դրանից պետությունը ի՞նչ ժողովրդագրական քաղաքականություն է իրականացնում:

Գնահատում՝ նախապես մշակված սանդղակի միջոցով:

Տնային առաջադրանք՝ պատրաստել ամփոփիչ տեսադաս «ՀՀ բնակչության ժողովրդագրական իրավիճակը» թեմայի վերաբերյալ:

Դասի վերջնարդյունքները

Իմանա՝ ՀՀ բնակչության վերարտադրության բնական և մեխանիկական շարժընթացը, պետության կողմից իրականացվող ժողովրդագրական քաղաքականությունը:

Կարողանա՝

- բացատրել Բնակչության շարժընթացի պատճառները՝ 19-րդ դարից մինչև մեր օրերը:
- վերլուծել ՀՀ բնակչության բնական և մեխանիկական շարժերի ցուցանիշների դինամիկան, վերարտադրության և ժողովրդագրական քաղաքականության առանձնահատկությունները:
- գնահատել միգրացիայի սոցիալ-տնտեսական հետևանքները ՀՀ-ում
- արժևորել արդյունավետ ժողովրդագրական քաղաքականության դերը ազգապահպանման գործում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Հայաստանի միգրացիոն ծառայություն, Սահմանահատումների 2022 թ. Հունվար-հունիս ժամանակահատվածում ,վիճակագրական հաշվետվություն, 2022։
2. Հայաստանի վիճակագրական տարեգիրք-2021։
3. Հայաստանի ժողովրդագրական ժողովածու, 2021, Մաս 1։
4. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, 2020թ. Պետական նպաստների չափերը, ընտանեկան և սոցիալական նպաստիհաշվառման կարգը։
5. Մուրադյան Յու. Հ., Մուրադյան Մ. Յու.,Ընդհանուր տնտեսական և սոցիալական աշխարհագրություն, 2016թ., 616 էջ։
6. Ս.Մելքումյան Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի Հանրա
7. В.П.Максаковский статья «Демографическая политика» 2007г.

Էլեկտրոնային կայքեր

1. www.demographia.ru
2. https://www.mlsa.am/
3. https://armstat.am/
4. **https://migration.am/**
5. **https://www.azatutyun.am/**

Հավելված 1.

ՄՇՏԱԿԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԹՎԱՔԱՆԱԿԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

Տարի	Ընդամենը, տարեսկզբի դրությամբ, հազ.մարդ	այդ թվում՝		Տոկոսով՝ ընդհանուրի նկատմամբ	
		քաղաքային	գյուղական	քաղաքային	գյուղական
1999	3 232.1	2 111.6	1 120.5	65.3	34.7
2000	3 226.9	2 095.8	1 131.1	64.9	35.1
2001	3 215.3	2 076.3	1139.0	64.6	35.4
2001	3 213.0	2 066.1	1 146.9	64.3	35.7
2002	3 208.3	2 062.8	1 145.5	64.3	35.7
2003	3 191.2	2 049.1	1 142.1	64.2	35.8
2004	3 173.8	2 035.3	1 138.5	64.1	35.9
2005	3 156.0	2 020.9	1 135.1	64.0	36.0
2006	3 136.8	2 005.4	1 131.4	63.9	36.1
2007	3 117.4	1 991.7	1 125.7	63.9	36.1
2008	3 097.3	1 975.5	1 121.8	63.8	36.2
2009	3 076.8	1 958.9	1 117.9	63.7	36.3
2010	3 055.2	1 941.5	1 113.7	63.5	36.5
2011	3 034.5	1 924.8	1 109.7	63.4	36.6
2011[1]	3 018.9	1 911.3	1 107.6	63.3	36.7
2012	3 021.4	1 912.7	1 108.7	63.3	36.7
2013	3 026.9	1 917.5	1 109.4	63.3	36.7
2014	3 017.1	1 914.1	1 103.0	63.4	36.6
2015	3 010.6	1 912.9	1 097.7	63.5	36.5
2016	2 998.6	1 907.0	1 091.6	63.6	36.4

2017	2 986.1	1 901.4	1 084.7	63.7	36.3
2018	2 972.7	1 895.8	1 076.9	63.8	36.2
2019	2 965.3	1 894.9	1 070.4	63.9	36.1
2020	2 959.7	1 892.1	1 067.6	63.9	36.1
2021	2 963.3	1 895.6	1 067.7	64.0	36.0

Հավելված 2.

ՀՀ պետական սահմանի անցման կետերով իրականացված ժամանումներն ու մեկնումները,

2022թ. հունվար- հուլիս *

(Աղբյուրը՝ Սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգ)գրանցումներ

ՀՀ պետական սահմանի անցման կետեր	Մուտք		Ելք		Հաշվեկշիռ	
	ընդամենը	այդ թվում՝ ՀՀ փաստաթղթերով	ընդամենը	այդ թվում՝ ՀՀ փաստաթղթերով	ընդամենը	այդ թվում՝ ՀՀ փաստաթղթերով
Ընդամենը	1 576 649	649 942	1 538 431	704 364	38 218	-54 422
Զվարթնոց	859 494	276 458	826 169	323 301	33 325	-46 843
Բագրատաշեն	470 196	282 735	457 099	281 888	13 097	847
Մեղրի	74 968	28 497	75 580	28 525	-612	-28
Գյումրի	17 530	8 265	18 851	10 710	-1 321	-2 445
Այրում	14 139	6 021	18 213	7 696	-4 074	-1 675
Բավրա	113 808	36 279	122 818	44 263	-9 010	-7 984
Գոգավան	24 544	11 450	17 145	7 750	7 399	3 700
Պրիվոլնոյե	56	21	30	14	26	7
Էրեբունի	1 790	116	2 388	115	-598	1
Կարգո	124	100	138	102	-14	-2